

## 4.2. Զբոսաշրջություն

### 4.2.1. Միջազգային զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2010թ. հունվար-դեկտեմբերին Հայաստանի Հանրապետություն են ժամանել 683979<sup>1</sup> զբոսաշրջիկներ, 2009թ. նույն ժամանակաշրջանի 575281 զբոսաշրջիկների դիմաց կամ աճի տեմպը կազմել է 118.9%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով Հայաստանի Հանրապետությունից մեկնել է 640032 մարդ կամ 2009թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ցուցանիշի աճի տեմպը կազմել է 121.6%:

<sup>1</sup> Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության, «**զբոսաշրջիկ**» է համարվում ցանկացած անձ, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր՝ ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

Ըստ նույն մեթոդաբանության, բոլոր ճանապարհորդները, ովքեր զբաղվում են զբոսաշրջությամբ, համարվում են այցելուներ, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ «**զբոսաշրջիկներ**» (գիշերող այցելուներ) և «**մեկօրյա այցելուներ**» (առանց գիշերելու):